

պէս կերեւի՛ զի ծիսական եւ արարովական եւլն՝ պաշտամանց եւ սովորութեանց մէջ գործուած ոչոքնունին նշանակութիւն չունին՝ եւ երբեք փրտանգաւոր չեն, եւ թէ բաւական է որ Հայութեան զգացումն միշտ արծարծւած մնար, Հայ թեզուն պահպանուի, գրականութիւնն պայծառանայ, աղջային միութիւն լինի, իսկ այլն ամենայն աւելորդ է:

Այս տեսակ գաղափարի եւ նպատակի մէջ եղած թերութիւնքը աւելի զգալի ցուցանելոյ համար՝ մեր նախնեաց համոզմանց փորձառու ջանքերէն նկատելով եւ քաղելով՝ մի թեթեւ գաղափար տամբ:

(Ի շաբաթիոյ)

ՎԱՀՐԱՄ ՎԱՐԴԱԳԵՑ ՄԱՆԿՈՒԽԻ.

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱԼՈՋ Զ.0.1.0.8 0.3. 0.4.0.3 0.7.0.8.

ՀԵՐಡՈՒՅԾՈՂԱՅ ԵՐ ԲԱԺԱՆԵԼՈՅ ԵՆԻԵՆԵՑՈՅՆ ՀԱՅՈՏ.

(Եղբայրականիոն)

609.

Յահանգիր Ըստ Ս. Առաջի ժիշտակոյն լատինացիան
Առաջականութիւն:

(Եմք Տեսոն 1327): — Յաջորդեալ յաթոռ և այրապետութեան Յակոբ Տ. Մահացի՝ քեռորդի Անաւարդեցոյն՝ յետ վախճանին Առտանդեայ Լամբրոնեցոյն՝ ի չորրորդում ամի Աաթուղիկոսութեան իւրոյ (1331) արար պատասխանի առ պապին և առավելայ, նանրացուցեալ դչորախօսութիւն ունիթոռաց զԼ և առ արքոյէ, դորմէ զրեալն էին, եթէ կործանեաց զեկեղեցիս և զվանորայս՝ որպէս տեսցի ի պատմութեան նորին (Միթթար Ապա-

րանցի), և առ իշահել զսիրտ գեսազանաց պապին եկեղեցն վասն այսր ամենայնի՝ և առ ի ստանալ ի նոցանէ զերեսուն հաւզար ոսկիս՝ զոր առաքեալ եր պապն վասն նորոգութեան աշխարհիս մերոյ Ճաղավարար ոմանց եպիսկոպոսաց և վարքապետաց, յօրս էր Օ. աքարիս Դործորեցի և Յովհան Աղնակացի. և հաւանութեամբ նոցին զըեաց թուղթ ընդհանրական՝ առ ամենայն և այս չհալածել զՅավհան Քրունեցին և զընկերս նորա այն է զԱւնիթոռաւ, այլ լինել ձեռնառու բայց տեսեալ եթէ ոչինչ լուաւ այնմ աղջն, այլ առաւել շփոթի յՈւնիթոռաց անախ, զբէ և առ Յովհան Քրունեցի՝ չնրտառցանել զաղդն (1336). այլ յետ այսորիկ տեսեալ եթէ բազմացեալ Ունիթոռաւնք և ի կարգս կարգս բաժանեալք՝ յարուցանին զաղմուկ վասն վերատին մկրտութեան, որպէս լիօրէն աեսցի ի զլուխն յետադայ, հրամանաւ արքային Լեռնի զոմանս զլնաւորս ի նոցանէ կալեալ յանդիմանէ. և առ ի խաղաղելոյ զաղդն՝ զբէ առ պապն աղաւել՝ յանդիմանել զարեւելեան լատինս՝ զրգուիչս ունիթոռաց՝ ի խոռվել զաղդ և այսոց:

Յետ երկիցս հարուածելոյ աշխարհին Աիլեկիոյ՝ յերեաց Ապիապտացւոց խակս յարակցելոյ ազիս մերոյ առ պապն և ուղմայ և օգնութիւն խեղդելոյ յարեամաց, անիեալ զժառութիւն վերատին առ այս ընդ մէջ կաթուղիկոսին և արքայի՝ և եպիսկոպոսաց և իշխանաց՝ Յակոբ Աաթուղիկոս զրդեեալ ի բանսարկուաց՝ կշամամբէ զԼ և առ արքայ իրեւ պատճառ առ երթենկութեան ընդ արեւմանայց, յորմէ հասանին աշխարհին հարուածք ք:

այնպիսիք։ Իսաց ոչ տանելով՝ արքայի այնմ (1341)՝ ընկենու զիաթուղիկոս յառ թոռոյ յետ կալոյ նորա յայնմ զամս ձար։ Իսկ ի գրգորի չարախօսաց զազգէս ձար յոց առ պապն ձռովմայ՝ որոց բազումք էին յԱւնիթոռաց անտի, յետ փոխադարձ թղթակցութեանց արքային և Միսիթար Կաթուղիկոսին որ յետ անկման սոյն Յառ կորայ յաջորդեաց զաթոռն (1354), և ի պապէն առ նեսա, և ոչինչ օգտելոյ անտի, առ ինքն Յակոբ զնայ ի Պապիս առ պապն Աղեմէս Օրդ, և զոր միանգամ թղթով ոչ կարէին հաւատարմացուցաւնել՝ զայն ամենայն բերանով առաջի եղեալ նմա, հաճէր զնա յոյժ։ և դիմեալ անտի ի ձռովմ յուխա սրբոց տեղեաց, ի գառնոլ իւր վերստին (1355) յաշխարհ իւր, վաղձանեալ Միսիթարայ, նստաւ վերստին յաթոռ հայրապետութեան հաւանութեամբ Կոստանդեայ արքայի և եպիսկոպոսաց ձայոց։ ուր յետ վարելոյ զիշխանութիւն այլ ևս ամս չորս՝ վաղձանի առ Տէր։

ՅՈՒ. 1. Դ.

Լառինահայ Ռանինուու ի ձայտապան և այլուր, ու յետ էր 100 ամաց չափան։

(Եմք Տեառն 1317)։ — Յաւուրս Կոստանդեայ Կաթուղիկոսի Լամբրոնեցւոյ՝ հրամանաւ փափին ձռովմայ Յովհաննու եկեալ ի կողմանս Ետրապատականի Ծարդ գուղիմու Լատին եպիսկոպոս ի կարգէ քարոզողաց (Միսիթար Եպարքանցի), գուլով ուսեալ զլեզու Պարսից առ սակաւ, առնէր քարոզութիւն անդէն, որում և յաջողեալ գործ քարոզութեանն շինէ վանս ի կողմանս քաղաքին Մարաղու-

Յովհան վարդապետ Վանեցի կոչեցեալ՝ փափակելով՝ եթէ որպէս իցեն վարդապետութիւնք նորա, (1328) գնաց առ նա ի Մարաղայ ըստ պատուիրանաց վարժապետին իւրոյ Խսայեայ Վարդապետին Եւցեւոյ։ որում հաճեալ յոյժ ընդ վարդապետութիւն նորա, ծանուցանէ իւրումն վարժապետի, և ինքն ըզտեղի կալեալ անդէն՝ մնայ առ Լատին եպիսկոպոսն զամ մի և կէս, և ուսուցանելով նմա և նորին ընկերաց զբարբառ Հարոց, ինքն ևս ուսանի ի նմանէ զԼատին լիզու։ ուրանօր և զործակցեալ միմեանց, յորս յարի և Յակոբ վարդապետ ոմն թարգման, թարգմանեն ինչ ինչ ի Լատինացւոց անտի ի ձայ։

Եպա բերեալ Վանեցւոյն զԲարդուղիմէոս եպիսկոպոս յաւանն Վանայ, զրէ առ աշակերտակիցս իւր՝ ընդ որս ուսեալ էր յոդս Եւցեւոյն, և առ այլ վարդապետս՝ հասանիլ անզը, և առ նորին Բարդուղիմէայ՝ խորհել ժողովով ի վերայ կրօնից և ծիսից (1330). որք յայս ժողով կոչեցան ի Վանեցւոյն՝ էին այսոքիկ աներեկէք ոմանք։ Մարդար վարդապետ ի գեղջէն Ոծոպայ. Ձայրապետ վարդապետ յԵօթնաղբիւր գեղջէ. Յովհաննէս վարդապետ ի Ծառան գեղջէ. Աիմէօն վարդապետ ի Բասին գեղջէ. Աերասէս վարդապետ ի Թարխան գեղջէ. Ըռաքեալ և Լալ վարդապետք յԵրատաղ գաւառէ. Գրիգոր վարդապետ յԵպրակունի գեղջէ. Կոստանդին և Յովհաննէս վարդապետք ի Կաղզենոյ, և Յակոբ վարդապետի Խաչենոյ, և Յակոբ վարդապետք ի Վանոյ. ընդ որս և իշխան տեղւոյն Գէորգ քեռորդի Վըռ-

նեցւոյն Յովհաննու։ Արք հաստատեցին ժողովով՝ լինել քարողիչը ուղափառութեան, և զի հաստատուն և անփոփոխ ի նոյն մնացեն և ապահով, (գուցէ թէ պաշտպան լիներ նոցա եկեղեցին Հռովմայ) համաձայն կամօք ի բաց թողեալ զրովանդակ աւանդութիւնս ազգին՝ լատինականօքն վարեցան ծիսիւք յամենայն իրս և յաւետ եկեղեցական պաշտամունս, զորս և փոխազրեցին ի հայրենի բարբառ։

Եյսու մաօք դարձեալ յիւրաքանչիւր տեղիս՝ ձեռն ի գործ արարին միաւորել զազգն ընդ հռովմական եկեղեցւոյն, ըստ որոց և յորդորեին զնոսս փոխել և զարտաքին ծէսս՝ զհայրենի սուրբ աւանդութիւնը, և մուծանել յեկեղեցիս զայլ և այլ կարգս ըստ նոցին. որով և յարուցին ուրեք ուրեք վէճս՝ և ազմուկ մեծ՝ ի Մեծ Հայս և ի Ախիլիա. ընդ որ վշտացեալ Եսայեայ Նշեցւոյն, և պատճառ եղեալ շփոթութեանցն զՎանեցին, զրեաց նմա զիր յանդիմանական՝ շիջուցանել զալմուկ ի մէջ ազգին յարուցեալ ի պատճառս այլայլութեան կարգաց և հայրենի աւանդութեանցն բարձման, ևս և վիճմանց ի վերայ բառիս՝ “բնութիւն,, զի մէք, ասէ, դաւանիմք անշուշտ իսկըք բանց և այսո՞ եթէ մի Վրիստոսն՝ Տըշմարտապէս Եստուածէ և մարդ, զաստուածային և մարդկային ունելով բնութիւնս միաւորեալ անշփոթ. ըստ այսմ պարտ է ձեզ զգաստութեամբ վարել, և ոչ կագել ի վերայ այսոցիկ յանդիման Մրգուզ շնուրանաց (զոր ի մէջ բերէ Միսիթ. Եպարանցի)։

Եյլ իրեւ ապախտ արարեալ սոցա զրանիւք Եսայեայ՝ օր ըստ օրէ յաւելին

զշփոթութիւն յազգին, առաջնորդք և վարդապետք յամենայն աեղիս՝ յորս և զտանէին՝ ղնոսաւ առհասարակ հալածեին, ընդ որս և արքայ Լեռն Աշքդ առաքեաց զարս՝ կալան զոմանս յընկերաց Քոննեցւոյն և արգելին ի բանաի. յորոց նեղեալ նոցա՝ ամբաստան եղեն առապան Հռովմայ, եթէ Լեռն արքայ Հայոց կործանեալ նեկեղեցիս և զվանորայս՝ արկ հերձուած ի մէջ ազգին (1331). առ որ պապն՝ թէն գիտէր զհաւտարմութիւն արքային, այլ Երկմտեալ ի չարաշիսութեանց բազմաց, զրեաց առ գետպանս իւր ի Ախիլիա չտալ զերեսուն հազար սոկին, զոր առաքեալ եր ի պէտանորոգութեան աշխարհին, մինչեւ սառուգեցին ամբաստանութիւնքն, և զի զըրեալ ևս էր զայսմանէ առ Յակոբ Կաթողողիկոս Ասեցին, սա ունայնացոյց առաջի գետպանաց պապին զամբաստանութիւնս զարքայէ, և առ ի փութապտտանալ ի նոցունց զդրամնն ի շինուաթիւն աշխարհին (1331)։ Ժողով արարեալ Եպիսկոպոսաց և վարդապետաց, յորս էին Զաքարիա Շոռծարեցի և Յովհան Եղիկացին, նոցին հաւանութեամբ գրեաց թուղթ հանրական յամենայն տեղին՝ ընեղել զընկերակիցս Վըռնեցւոյն՝ այլ մինել ձեռնոտու. այլ ի շըտ փոթիւ ազգին ի վերայ ինչ ինչ Լատինական ծիսից, զօրս նոքին ջանային մաւծանել յեկեղեցիս մեր, զրեաց ապա և առ համախոհս Վրոննեցւոյն՝ յեսս կալ ի խոռվելոյ զազգին։

Եյսօրինակ հալածումն սաստկացաւ յազգէն և ևս ի վերայ նոցա (1333). երբեւ վախճանեցաւ Լատին Եպիսկոպոսն

Քարդուղիմնոս, յորում ժամանակի և
ընկերք Քռնեցւոյն առաւել համարձաւ-
կութեամբ վարեին, յորմէ նեղեալ յոյժ
նա ինքն Քռնեցի, չոգաւ ի Առօվմ առ
քահանայապեան Յովհաննէս, և առնոյք
հրաման ի նմանէ հաստատել ի մէջ Հա-
յոց զկարդ Դամինիկեանց՝ կոչեցեալ
միաբանողաց, որը ըստ Լատինացւոց է Ու-
նիթու, այսու մտօք գործեալ յերկիր
իւր՝ բազմացոյց զընկերս և զաշակերս:
Իսոցանէ սկիզբն ասին Լատինահայ
կաթոլիկք և կրիստոնունք կոչեցեալքն,
կամ լաւ ես ի Քռնեցւոյն, որ զայսչափ
գարշահոտութիւնս քուեաց ի միութիւն
ազգին, և խորշեցոյց յիրերաց զմիակ
ուղղափառ եկեղեցին Հայաստանեաց.
և կամելով յուղութիւն վերածել զաղ-
դըն ըստ քմաց, ատելութիւնն սաացեալ
յազգէն՝ եղեւ պատճառ բաժանման ազ-
գային միութեան և երկպատակութեան
յայլ և այլ արարողութիւնն և ի ծէսս, և
բազմաց՝ ի հերձուածս և յանօրէնու-
թիւնու, որպէս ի ներքոյ:

Քանզի Քռնեցին և որ ընկերք նորա
կառուցեալ զվանորայս ի բազում տեղիս
և զեկեղեցիս ի գաւառն Մարտզու, ի
Կախչուան, ի Առլատանիէ, ի Տփիսս, ի
Գլիմ՝ ի քաղաքն Ապահայ որ ընդ իշ-
խանութեամբ Շենուացւոց, թարգմանե-
ցին զգիրս ինչ ի Լատինէ ի Այ, ոմանք
եղեն արք իմաստունք՝ խաղաղարարք
բազմաց, ոմանք ևս անհրահանգք՝ ա-
ռիթք գայթակղութեան ազգին, որպէս
և հերձուածապետ սոցա՝ Քռնեցին Յովհ-
հան, որ յաղագս բազմաց տառապանաց
կրելոց ի Այոց՝ ստացեալ ատելութիւն
ընդդէմ նոցա՝ զորս միանգամ եղիւտ յարս

մասնաւորս, զայն ամենայն եղ ի վերայ
ամբողջութեան աղքին, և եցոյց զնոսին
մոլորեալս, զորս ինքն սերմանեաց:

Իսա այսոցիկ ի բազմանալ Ունիթո-
ուաց, անհնարին պառակտումն անկաւ
ի Աղաղին բովանդակ (1335)՝ վասն զի՞
նոքին Ունիթոոք հնարեին ամենայն ի-
րօք միաւորել զազգն ընդ Հռովմէական ե-
կեղեցւոյն, իսկ Այք դժուարանային ընդ
այսպիսի բանս նոցա, որով և անմիաբանք
ի գործս նոցա. քանզի եղեալ էր մեծ
մասին նոցա ի միտու եթէ ոչ երբէք բա-
ժանեալ են հաւատով՝ յեկեղեցւոյն Հռ-
ովմայ՝ յաւուրց Լուսաւորչին, այլ
զաւանդութիւնս և զծէսս, զի ընկալաք
ասեն, ի Լուսաւորչին և ի Յարդման-
չաց մերոց սրբոց նախնի հարց՝ անհնար
է մեզ յեղաշրջել յորում կամք մնամք՝
ասեն՝ անշարժ. զոսսա Սինիթար Եպա-
րանցի՝ կոչէ Հայք միաբանք, որք և ամե-
նայն իրօք ըստ նախնի Հարց սովորու-
թեանցն և անփոփոխ յաւանդութիւնս,
բայց ի բանս հաւատոյ և ի փրկութիւն,
ասէ, համաձայնէին ընդ սրբոց եկեղեցւոյ:
Իսոցին համարի էին և այնոքի բնակիչչք
Ակիկիոյ, որք ոչ ընկալան զժողովս Ասոյ
և Ետանայ յազագս ծիսից, այլ միայն
ըստ վարդապետութեան հաւատոյ, զոր
յառաջմէ ունեին, և սոքա կոչեին Առնթք՝
ըստ Ասեցւոց կոչելոյն, իրը զի բաժանե-
ցան ի Ասոյ միաբանութենէն:

Իսկ որք յանձն առին փոխել զծէսս,
որոշելով զանձինս յաղթին Հայոց՝ կոչե-
ցան, ասէ, Հայք կաթողիկք. յորոց ոմանք
ի Ապահ, յերկիրն Կախչուանայ, յ Երբն-
ջակ և յայլ տեղիսս որք և օղինօք և ա-

բարողութեամբ խորհրդոց՝ յարեցան յիշելեցին ։ Առվմայ:

ԵՅԼ ոքք մաին ի կարգս Ունիթոռաց՝ իրը յերբորդ դասու եղեալք, զդեցեալ զգեատ Պատմիկեան պատրկաց և համաւխոհից նոցին, ըստ ամենայնի վարեցան Լամին արարողութեամբ. յօրոց ոմանք առ ի հաճոյանալ Լատինացւոց՝ արհամարհէին զամենայն ինչ որ ։ Այսոց էր, համարելով զնոսին իրբե զհերեաիկոսս և զանհաւասաւ և ըստ գրելոց Վագարանցւոյն, —որ և յարեցաւինոսա, —և Ախիթար Կաթուղիկոսի յաջորդին Յակոբայ առ ։ Առվմայեցիս, որպէս ի ներքոյ, զորս միանգամ ի ։ Այսոց յինքեանս գարձուցանեին, կրկին մլրտէին, դրոշմէին և ձեռնադրէին, օրպէս և Վագարանցին վկայէ զանձնէ, ։ Ամլրտել զոմանս յազգէ մերմէ ի ծածուկ տեղիս և ի հնձանս այգեատանեայց, :

(1336):—Եւ զի յարեան ի սմին ժամանակի Եկերտս Պաղոն Եպիսկոպոս Ուժեայ և Ախմէովն բէկ եպիսկոպոս Կարնոյ, և միաբանեալք զարս ոմանս ընդ ինքեանց՝ քարողէին աստ և անդ թէ հարկ է կրկին մլրտել և դրոշմէլ զամենայն ։ Այս Լատինական ծիստուք, և վերստին զքահանայն նոցին ձեռնադրէլ և պատարագել տալ Լատին բարբառովք, և փոխել զամենայն սովորութիւնս ի միաբանութիւնն ընդ ։ Առվմայ եկեղեցւոյն, իրը այն զի ասէին, թէ մլրտութիւնն ։ Այսոց երկրաց յելի է, և պատարագ նոցա ոչ է ձշմարիտ, առ այս ամենայն անկարգութիւնս սոցին Յակոբ Կաթուղիկոս և Լեռն արքայ՝ արքունի իշխանութեամբ արձակեալ զարս յամենայն ուրեք, կալան զու-

մանս ի խռովարար անձանցն ի բանտի, և աքսորիցին զբաղումս, հազիւութիւնն ի արացեալ շիջուցանել զազմուկ նոցա. իսկ զներսէս և զԱխմէովն զնոցին զինաւորմ ածեալ առ Կաթուղիկոսն, որոց յետ սաստիկ կշտամբանաց՝ յանձն առեալ ի վերին երեսս զիսնարհութիւն՝ չոքան ։ Եկերսէս ի բերդն Կաչնոյ և Ախմէովն ի տեղի իւր, իրատեալ բաղմօք՝ ըստ Աղբիթար Կաթուղիկոսի, «զի մի՛ հնաբեցւեն անձանց զնորանոր իսարէութիւնս, և մի՛ լիցին պատճառ կորստեան հողւոց . . . , և աղդ արար ի բաց կալ ի կրկին մլրտութիւնէ . . . քանզի, ասէ, մեք ըզմկրտութիւնն իւրաքանչեւր եկեղեցւոյ՝ մի գիտեմք, և ոչ է լաւագոյն մին քան զմլւան:

ԵՅԼ սոյն Եկերտս և անդ յաւանն Կաչնոյ Կրկին յարոյց զիսովվաւթիւն ի բնակիչս յազապս արարողութեանց եկեղեցւոյ, և հալածական ի ժողովրդէն անկաւ ի հեռաւոր տեղիս Յակոբ Կաթուղիկոս զբեաց առաջաց առ պատկն ։ Առվմայ՝ յանշիմանել զիսովվարարս ։ Այսոց և զնոցին հրապուրող՝ զարեելեան Լատինս, և զսպել զնոսին, այլ թէ աղդ արար պապըն արեելեաց՝ սանձել զունիթոռուսն ի զգաստութիւն, սակայն նոքին ունիթոռք և Եկերտս Պաղոն և Ախմէոն բէկ Եկերձեալ եպիսկոպոսք՝ զբաղում չարախօսութիւնս գրեցին ի ։ Առվմայ զԿաթուղիկոսէն և զարքայէն Լեռնէ:

Օանարժան վարմունս Ունիթոռաց և զԵկերձուածողութիւննոցին, որովք ըզմկրտիւն աղզին քակտեցին ի բազում Եկերձուածս, իմի վայր յիշեցուցանէ Ախմէթար Կաթուղիկոս՝ ի թուղթս զան-

դատանաց առ Հռովմայեցին՝ ըստ յառաջ բերելոյ Չամչեանին ի հաւաքմանց ժաղղովոց՝ և յանդգնեցան, ասէ, ի ծածուկ և յայտնի մոլորութիւն մուծանել յեկեղեցին քանդին ինքեանք կրկին ձեռանաղեալք, և կրկին մլրտեալք, նաև զայլս բազումա ձգեցին առ ինքեանս, և կրկին մլրտեցին և կրկին ձեռանդրեցին, զի զոմանս ի բազանիս, զայլս ի տունս, և զայլս յանցս ջրոց կրկին մլրտէին, և ի ծածուկ տեղիս, և ի վայրս անտառաց կրկին ձեռանդրէին։ Եւ պատճառ զայս այսպէս առնելոյ՝ ասէիննախ, թէ յորժամ զառաջինն մլրտեցյք՝ ոչ ձանաշեիք, ուստի և չէք զիտակ՝ թէ արդեօք քահանայն ասացեալ իցէ, ես մլրտեմ զքեզ յանուն Նօր և Որդւոյ և Նոգւոյն սրբոյ, և դուցէ չիցէ ասացեալ վասն արբեցութեան։ վասն որոյ հարկ է ձեզ մլրտիլ ի կատարեալ հասակի, զի ստուգապէս ընկաղջիք ի քահանայէ զձե մլրտութեան, և հանջիք զերկրայութիւն ի սրտից ձերոց։ Երկրորդ՝ զի զմեզսն զորս գործեցիք՝ գուցէ ապաշխարութեամբ չկարացիք ջընջել, այլ մլրտութեամբ քաւեալ սըրբեսջիք, և առանց պատժոց քաւարանի՝ կարաջիք անցանել յարքայութիւն երկնից։

Յետ որոշելոյ Ունիթոռաց յազգէ և յեկեղեցւոյ մերմէ նստաւ նոցա զիխաւոր և առաջնորդ՝ ի Կախչուան, որք էին Նօյք ազգաւ և վարէին Լատին ծխափ, որք և յետոյ կոչեցան Քահուկք կամ Քահէկեցիք՝ յաղագս բնակելոյ նոցա և ի Քահուկք գաւահին՝ Ոիւնեաց աշխարհի. յորոց՝ որպէս ասացաւ, յարուցեալ մեծամեծ խռովութիւնք յաւուրս բարձ-

ման թագաւորութեան Հայոց և Լանկթամիրայ և անդր ևս՝ եղեւ պատճառ միւսանգամ շփոթութեան. վասն զի ի ձեռն թարգմանեալ մատենից, զորս ի Լատինացւոց փախէին ի Նայ, քարոզէին յերկիրս Կախչուանայ, Քահէկայ և Եւրընջակայ և Գոոզթնայ մինչեւ յԴալրէժ՝ ցՄարաղայ և ցայլս. և քաղէին այսու երբեմն զօգուտ, և երբեմն պտուղ գայթակղութեան և ատելութեան։

(1376)։ — Յաւուրսն յայնոսիկ էր ոմն Պարզիս վարդապետ Հայոց ի վերին վանս Սպրակունեաց ի գաւառին Երնջակայ, զոր կոչեն Պեծորեցին և Պիսիթար՝ և քաջ վարդապետ և առաքինի ըստ Հայոց որպիսութեանց, որոյ ոչ էր, ասեն, կերեալ միս և ըմպեալ զինի ամենայն համանման աշակերտօք իւրովք, առ որ աշակերտք Պարապետ վարդապետի՝ երեւոյն ի մէջ Ունիթոռաց՝ Ճ'ագարակ կերն կոչեցելոյ՝ բանս եղեալ, եկին փորձել զնա բանիւք՝ ի գրոցն առաքինութեանց, այլ զի ունէր և սա զաշակերտս ոչ սակաւ հաստատեալս ի վերայ վիմի ուղղափառ հաւատոյ, յորոց միումն անցեալ գործվ ի կողմն Ունիթոռաց, ըստեալ եթէ աշակերտք Ճ'ագարակերին ունին երթալ և բանիւք նենդաւորօք պաշարել զվարդապետ իւր նախակին, պահէելով ըզ յարգ առաջնոց վարդապետին իւրոյ՝ նախ քան զնոսին փութացաւ առ Պարզիս, և ետ նմա զօրինակ առաքինութեանց գըրոցն. և զոր ինչ հարցանելոցն էին ի նըմանէ, ասաց նմա հմտանալ, ըստ որոց և նա ինքն Պարզիս պապանձեցոյց զաշակերտսն զեկեալս առ իւր ի պատրելոյ մասին, որովք և Ունիթոռք արարին այս

նուհետեւ ընտանութիւն ընդնմա: Ի սմին
ընտանութեան ոմանք յունիթոռաց բանս
ի մէջ արկեալ, ասեն, եթէ չայք չեն
միարան ընդ եկեղեցւոյն չռովմայ. այլ
Արքիս եղ առաջի, եթէ զուք ձեզէն
խոստովանիք թէ այդ գիբը առաքինու-
թեանց է յօրինեալ ըստ ուղիղ դաւա-
նութեան չռովմէական եկեղեցւոյ, և
ահա յընթեռնութ իմ զայն, գափ հա-
մաձայն չայտատանեաց եկեղեցւոյ ա-
մենայն իրօք. և թէպէտ, ասէ, գիտեմ
զի ոմանք չարախօսք բանսարկուք կամին
բաժանումն ընդ մէջ արկանել, բայց ես
խրատեմ զստահակս յերկոցունց կող-
մանց, և լոեցուցանեմ զամբաստանողն
զայոց և զռովմայեցւոց. ընդ այս մեկ-
նեցան ի նմանէ ունիթոռք՝ սիրով բայց
ոչ հաճութեամբ, զի ոչ կարացին ձգել
զնա յիւրեանց կողմն:

Եւ զի՞ սա այսպէս յերկոցունց կողմանց
զիսուլարարսն նախատէր, վասն այսորիկ
և յերկոց կուսէ տառապանս կրետց ոչ
սակաւ. զի ունիթոռք բամբասէին զնա՝
թէ ոչ է կատարեալ ուղղափառ, և չայք՝
եթէ զազգմեր կամի գարձուցանել ի Կա-
տին:

Եյլ վասն զի՞ որպէս սոյն Արքիս
վարդապետ Եպրակունեցի, նոյնպէս և
այլ ոմն համանուն սորին Արքիս ճզգ-
նաւոր յանապատին Շամբի ձորոյ՝ ընդ
եղբօր իւրում Պուկաս Վարդապետի
առաջնորդին կրօնաւորաց անդէն ջանա-
յին պահել զմիարանութիւն ընդ հռով-
մայեցւոց, և զերկուց կողմանց զբանար-
կուսն բանիք նախատէր, որովք և սոքա-
միարանս զինքեանս համարէին ընդ հը-
ռովմէական եկեղեցւոյն, միայն ընդ նոսա

ոչ ի ծէսն նմանեալ (1380)՝ չողան ու-
նիթոռք բազմութեամբ ի վանս Եպրա-
կունեաց առ Արքիս վարդապետ, առ
որում էին և բազմութիւն աշակերտաց
իւրոց, և ասեն, թէ պարտ է ձեզ իսպառ
կամ միարանիլ ընդ չռովմէական եկե-
ղեցւոյն հաւատովք և ծիսիւք, կամ իս-
պառ անմիարանս զձեզ ցուցանել ինոյնս,
որովք այնչափ հրապուրեցին զոմանս
յաշակերտաց Արքսի մինչեւ յանձն առ
ուն միւսանգամ մլրտել, և միարանու-
թեամբ ընդ նոսա քարոզել ամենայն ու-
րեք՝ եթէ ամենայն աւանդութիւն և
պաշտօն եկեղեցւոյն չայոց՝ է թիւր և
անփուերց և մոլորեալք են չայք, ըստ
որոց և յարեալ յինքեանս զբազումն՝
ձեռնադրէին և մլրտէին ի հեռաւոր տե-
ղիս, որպէս ասէ Միփիթար Եպարանցի,
որ մինն ի մլրտողաց անտի էր:

Քնդ այս անարժան գործ սոցա վառե-
ցան առ հասարակ վարդապետք չայոց և
իշխանք և ռամփիք. բազումք ևս՝ ըստ
Մեծորեցւոյն՝ ողբս ի բերան առեալ ան-
միփիթար սգով լային. յորոց Մազաքիս
վարդապետ կոչեցեալն ճգնաւոր՝ յերկրէն
Պարիմու, տեսեալ զայսպիսի գործս սոցա
և վառեալ ի վրէժինդրութիւն, զնոց
առ Արքիս վարդապետ ի վանս Եպրա-
կունեաց՝ խորհրդակցեալ ընդ նմա՝ պա-
տուհասել զունիթոռաց և դյարեալսն ի
նոսին. և զի՞ բազմաթիւ էին աշակերտք
Յովհաննէս վարդապետի Կախիկ կոչե-
ցելոյ, որ և բարեկամ իշխանաւորաց ի
Բատաթե, և լ զնաց Մազաքիս առ նա,
զոր և առեալ բազմութեամբ աշակեր-
տաց քահանայից և իշխանաց՝ գարձաւ-
անդրէն յԵպրակունիս, աստանօր տուեալ

զինչս բազումն ի դրունս այլազգեաց հա-
րիւր վաթօռուն հազար դաշնեկանս ըստ
Եպարանեցւոյն, զաշակերտն Արգսի՝
զյարեալան յունիթօռուն և զոմանս ևս ի
նոցունց յատեան ածեալ և դատեալ
հրապարակաւ զնոսին, զոմանս ի նոցանէ
բրածեծ առնեն իբրեւ զկրկնակնունքս և
ապստամբս յեկեղեցւոյ, զոմանց հերս և
զմօրուան վետեալ անարգեն. և զայլս
այլով օրինակաւ չարչարեալ, զբազումս
ևս ի բանտի եղին երկաթի շղթայիւք.
յորոց ոմանք յետ աւուրց զերծեալ և
հասեալ յարեմուտո՞ւ առ լատինս խօսե-
ցան զամրապտանութիւնն բազում զազ-
դէն չայոց, որպէս և ունիթօռոք զբեցին
ի չռոմ. զայս աեղեկացեալ վարդապետք
չայոց աւատելան ի զայրոյթ որտի, և
զոմանս կալեալ ի նոցանէ մատնեցին ի
ձեռս իշխանաց, որք արկին ի նոցունց կէս
մի ի ջուր եռացեալ, և կէս ի տապակ
ջեռուցեալ, որոց թէե անհաւան դտա-
նէր Եպրակունեցին Արգիս, այլ լոեաց
յիշխանացն սաստից:

Ե. Այս Մաղաքիա՝ որ զգուշացաւ
այսպէս զւայոց եկեղեցւոյն յունիթու-
ռաց անտի, (1384) ի թուին չայոց
Պ. Գ.՝ մեռաւ յանկարծ ի ժամ կերակ-
րոյ, և համբաւ ել՝ եթէ գեղ մահու ե-
տուն նմա Ունիթուք: Սորա աշակերտ
էր զամն տասն Միսիթար Կապարանեցի, որ
զանցս Ունիթուռաց և զվեճակի այնը
ժամանակի եկեղեցւոյն չայոց զբեաց, և
ինքն ևս էանց յՈւնիթուռս, և ատելու-
թեան ոգւով զբեաց զոր միանդամ զըր-
եաց զւայոց, զորմէ և ի վարս իւր:

(b) $\lim_{n \rightarrow \infty} \frac{1}{n} \int_0^n f(x) dx$

ՊԱՏՄԱԿԱՆ

ԵՐԱՏԱԿԱՐԱՆ.

ՄԱՎԱՐԻ, ՓԻԼԻՊՊՈՍ ԵՒ ՅԱԿՈԲ ՀՅՈՒՅԵՎԵՑՔ.

Գառհութիւն՝ օրհնութիւն և բարերա-
նութիւն պաշտելի և երկրպագելի Տէրու-
թեանն՝ ինքնաբաւական անուան՝ առ
անսկզբնականի և բոլորից պաաճառի՝ յոր-
մէ ամենայն։ Եւ արարչակցի բանի իւրոյ,
որ է ծառագայթ փառաց և նկարագիր է-
ռութեան նորա՝ որով ամենայն։ Եւ համա-
պատիւ բղիսեցի լոյ յինքենէ առդւոյն ճըշ-
մարտի՝ յորում ամենայն։ Եռակի ա-
ռանձնական և բացորոշեալ յատկական
զիմացն, և անորիշ և նոյնագոյ բնու-
թեանն. որոյ իսկութեանն հասողութիւն՝
իւրում միայնում գերառուն և գերալը-
րական, բարձրահայեաց և ամենատես
գիտութեանն ծանուցեալ։ Բատ յայտ-
նութեան տնօրինական տնաեսութեանն
քարոզութեան, զԱրդի Հայր գիտացեալ,
և յԱրդւոյ Հայր իմացեալ, և զիսորս
նոցին Հոգին քննեալ։ Բայց համայն զըս-
տացական դցիի՝ անհաս և թաքուն իմա-
մնացեալ, ստորական բանականացս տե-
սակաց՝ և բուն իսկ երկնաւորացն սեռից։
Օք թէպէտ նիւթական ինչ ձեռվ, և
ստուեր սկան կերպիւ պատմաբանի տե-
սանել զնա մաքրագունիցն պատգամա-
ւորաց, այլ ոչ զըմբռնումն էութեան
նորա և ոչ հասումն բնութեան նորա թէ,
զի՞նչ ծանեան. այլ խոնարհական զի-
ջումն ըստ իմիք նմանութեան տպաւորու-
թեան որպէս տանէր՝ արարածական կա-
ռողութիւն ցուցաւ, զի զկամն իւր բառ